



## Պարույր Սևակ

### Երկենցաղ կենցաղ

Մարիամ, Մարիամ,  
Դու պարտ էիր ու պարտավոր  
Աշխարհ բերել մի... թո՛ւիս տղա,  
Բայց ծնեցիր մի... շե՛կ աղջիկ:  
Եվ լինո՞ւմ է արդյոք այսպես:  
Հավանաբար լինում է, որ եղավ:  
Եղա՞վ.  
Դու՝ տակավին ինքը աղջիկ,  
Ծառզարդարի շվի նման դեռ դալարուկ,  
Եվ... աղջրկա մա՞յր ես հիմա,  
Այն էլ մի... շե՛կ աղջրկա մայր:  
Եվ ո՞ւմ պիտի նա կոչի «հայր».  
Ոչ թե շորը գերհեռավոր,  
Այլ ինչ-որ մի... մի շովսեփի՞...  
Ու կան բառեր,  
Որ ես հիմա մեջս եմ պահում  
Այնպե՞ս,  
Կարծես բանտարկյալներ լինեն նրանք:  
Իսկ շուրթերի՞ս ,  
Փա՛կ շուրթերիս ձորի միջով  
Մի ժայռ է անվերջ սահում,

Մի ժպիտ, որ երկկենցաղ է՝  
Ինչպես... աղը.  
Դա՛ռն ու քաղցր՛ը,  
Կո՛շտ ու լուծվո՛ղ...  
Բայց կան բառեր,  
Որ կտրում են փշալարեր  
Ու փախչելով ազատվում են  
Մինչև անգամ արդիակա՛ն ճամբարներից:  
Ու դրանցից մի քանիսը  
Ահավասիկ  
Ինձնից փախչում-հասնում են քեզ,  
Որ քեզ ասեն.  
-Կյանքի՛ ձեռքով ինձնից խլված  
Այլապատկա՛ն բնագավառ դու իմ սիրո,  
Այլազըրա՛վ բնակավայր իմ սիրելի,  
Այլապատկա՛ն,  
Այլազըրա՛վ,  
Բայց ի՛մն էլի,-  
Բարձրդ բարի՛, իմ սիրասո՛ւն ու սիրելի՛,  
Չարչարանքիդ ապաշխարա՛նք:  
Եվ փա՛ռք աստծու,  
Որ ծնեցիր  
Թուխ մանկան տեղ աղջիկ մի շեկ:  
Ուրեմն արդեն մի Մարիամ Էլ եկավ աշխարհ,  
Որ երբ, հետո՛,  
Իր մո՛ր նման  
Ում հանդիպի և իր սիրով ընդմիշտ քովի՝  
Նրա հացը սրբացնելով դարձնի նշխար,  
Բայց դրանով  
Նաև մատնի հավերժական քաղց ու սովի,-

Նախանձելի՛-անտանելի՛ վիճակ անանց.

Ապրել մի կերպ սուրբ նշխարո՛վ - մեռնել անհա՛ց...

01.III.1967թ.

Արքնի